Ակնարկ, Արձակ

16+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐԻ ՎՐԱՆՆԵՐՈՒՄ

Բասենի բարձրավանդակ բլուրների վրա գարնանային եղանակ էր, չնայելով որ հունիսյան շոգեր էին սկսել դաշտի մեջ:

Դեռ հեռավոր գագաթների վրա և ստվերամած հովիտներում սպիտակին էին տալիս ձյունի շերտեր. բաց տեղերում, գորշ թացության մեջ, դալար կանաչությունը թավշանման քնքշությամբ գորգ էր կազմում, բծավորված և կտոր-կտոր եղած բազմաթիվ վճիտ վտակներով ու ջրակույտերով: Մանիշակագույն ծաղիկներ՝ զանգակաձև լալան, շեփորաձև կակաչն ու փոքրիկ, գողտրիկ գիներբուկը — խմբերով պսակ էին կազմել առվակների շուրջը. այս-այն կողմ գարնանային դեղին ծաղիկները գլուխ էին դուրս պարզում քարոտ վայրերի և փոքրիկ խորշերի միջից. հեռուն, բավական բարձրացած ցորենի և գարու կանաչ արտերի մեջ, բարձրագլուխ կապույտ շերտեր էին դնում **խիարուկները,** իսկ կապույտ շուշանը ճախնուտ կողմերում բացվել, իր մեծ նուրբ շուրթերն էր ցնցում մեղմիկ զեփյուռի տակ:

Ալեձև կանաչ բլրակներ հետզհետե բարձր, գույնզգույն ծաղիկներով և փողփողուն վտակներով շերտավորված, սարահարթեր՝ միմյանցից գեղածիծաղ, միմյանցից կենսապարար, շրջապատում էին այն մենավոր անկյունը, ուր գարնան սկզբից ի վեր իջել, բանակել էր բոշաների մի ցեղ, գորշ վրանների տակ, մեղմիկ ցած հոսող ջրվեժի կողքին, փոքրիկ, բայց շքեղ մի հարթության վրա:

Գյուղերը հեռու չէին: Մի քանի բլուրներ — և ահա տարածվում էր Հասան-Ղալայի դաշտը, կտրված մեծ, պղտոր Երասխով: Ամեն կողմ բնակություններ.— հեռվում՝ հնացած խարխուլ քաղաքն ու իր ապառաժոտ կողքերով բերդը. դեպի ձախ՝ ոլորապտույտ Դեվե-Բույնուի կիրճը. դեպի աջ՝ Բասենի շքեղ դաշտը. ապա, հորիզոնի մշուշի մեջ՝ լեռներ ու լեռներ, բարձր, դաժան շղթաներ...

Բոշաների բնակած տեղը թե՛ գեղեցիկ էր և թե՛ ապահով: Մի քանի քայլից հետո մի արահետ, քսան րոպեի վազքով, կհասներ Հերթև. ձիով երկու ժամ՝ դեպի բերդաքաղաքը: Բոշա կինը կարող էր շուտով ելնել, մտնել դաշտը, հինգ-վեց գյուղ թափառել և երեկոյան վերջալույսին, վրանները վերադառնալ:

Ցերեկները վրանների առաջ քի՛չ բազմություն կար և քիչ էր կենդանությունը: Ահագին գամփռները քնում էին արևի տակ. էշերը, եթե դաշտ չէին իջել, արածում էին բոշա մանուկների հսկողության ներքո. մանուկները խոտերի մեջ, մեջքի վրա տարածված, երազում էին բաց երկնքի տակ կամ քնում. իսկ տղամարդիկ վրանների հովանու ներքև, մաղ էին գործում կամ փսիաթ: Մի քանի կանայք, դեռ ջահել հարսները, վրանի առաջ օջախ կազմած, փշերից ու գյուղերից բերած փայտերից կրակ վառել, կերակուր էին եփում, լվացք անում կամ թե խումբ առ խումբ քիչ հեռու, ծաղիկների և ջրվեժի կողքին, գուլպա էին գործում և խոսակցում:

Գիշերն էր, որ սկսում էր մի եռուն, զվարթ կյանք այդ վրանների մեջ:

Վերջալույսին ամենքը տուն մտած, տեղավորում էին իրենց բերածը, ապա ճաշում: Հետո, աթոռակալի՝ իրենց ցեղապետի վրանի առաջ, մի մեծ խարույկ վառում, և երբ մութն իջնում էր

բլուրներին, երբ լուսինը կաթնագույն լույսով ողողում էր այդ սքանչելի բարձրությունը, պլպլացող խարույկի շուրջն էին կիտվում բոշաները։

Գալիս էր հովվական տիկը։ Օրվա անցքերի մասին քիչ խոսելուց հետո, գիշերային լռության գրկում, շների ընդհատ ոռնոցների, մանուկների զվարթ կանչերի միջից սկսում էր երաժշտությունը. բոշայական տխուր, մելամաղձոտ նվագը, որ արձագանք սփռելով՝ թրթռում էր, իջնում ծործորների խորքերը կամ երերուն ու մեղմիկ՝ գնում էր մարելու հեռուները։

Նվագում էր տիկը միաձայն, մի տխուր խաղի երկար տևողության միջից մեղմաձայն արտահայտելով երգի տխուր ելևէջները, որոնք գնում էին ոլորուն ու ճնշող, ապա հանդարտ ու գեղգեղ՝ իջնում, հալվում էին միաձայն խաղի գրկում։

Եվ տխուր խաղը մի վայրկյան երգին հանդարտ օրորելուց հետո, նորից բաժանում էր նրան և նորից նետում դեպի տարածությունը։

Այդպես ժամանակ շներն ի՛սկ դադարում էին հաչելուց։ Խարույկի սփռած լույսի հեռավոր աղոտության մեջ, գլուխը թաթերի վրա առած, անշարժ, ուշադիր, աչքերն երաժշտին, դեմքերը կծկելով՝ լսում էին նրանք։ Մանուկները ծնկները բարձր, գլուխը ծնկների վրա, կուչ եկած կամ թավալած խոտերի մեջ և ակնարկը հորիզոնին, աշխատում էին ո՛չ մի խաղ չկորցնել մելամաղձոտ երաժշտությունից։ Ամեն բոշա սիրում է երաժշտությունը. այնքա՜ն է սիրում, որքան իր ազատությունը, որքան իր բաց երկինքը։

Ամե՛ն բոշա մանուկ բանաստեղծ է, սիրահար՝ երգի, սիրահար՝ լուսնկա պայծառ երկնքի, պսպղուն կապույտ երկնակամարի, դալար ու ջրաշատ բարձրությունների և մելամաղձոտ, երազել տվող երաժշտության։

Եվ ահա նստել են բոշա տղամարդիկ չիբուխները ձեռքներին՝ վառվող խարույկի լույսի մեջ ու գլուխը կախ՝ լսում։ Բոշա կանայք անդադար գուլպա գործելով կամ բուրդ մանելով՝ խումբ առ խումբ տեղ են բռնել քիչ հեռու։ Եվ նվագողի դե՛մքն է միայն, որ ուռած թշերով և մեծ տիկը բերնին դեմ տված, ոգևորված, կարմրատակած, աչքերը դեպի բարձր՝ լուսավորվում է կատարելապես։

Հանկարծ, միաձայն խաղի մի բոպե տևողականությունից հետո նվագողը շարժվում է և սկսում մի պարերգ. մի կաքավող, թռչկոտուն, զվարթ պարերգ, որ շարժումն է ձգում մանուկների մեջ, շարժում է մինչ իսկ շներին։

Կանայք միմյանց երեսի են նայում, տղամարդիկ կանանց՝ աչքով պարի հրավիրում, մանուկները սողալով ավելի մոտ գալիս. հետո մեկե՛ն մի երիտասարդ ցատկում է մեջտեղ, ձեռքերը տարածում, մարմինը կոտրտում, նազանքով սահում գետնի վրայից և իր վրա պտույտ գործելով շրջաններ գծում խարույկի բոլորքը։

Ու բոշաները սկսում են մեղմիկ ծափահարել. մի քանիսը բթամատով և երրորդ մատով շրփացնում են, ուրիշները խուլ ձայնով շվշվացնում. ցեղապետը սիրալիր ժպտում է և գոչում.

— Դե՛հ, աղջիկնե՛ր, ձե՛զ տեսնեմ...

Բայց կանայք դեռ չեն շարժվում. դեռ նազ են անում, միմյանց առաջ մղում, միմյա՛նց հրավիրում։

Ապա մի հարս, մի համարձակ կին, ոստյունով ելնում է և առաջ նետվում։ Երիտասարդը ետ է քաշվում ու նստում. այժմ կինն է պարողը. միասին չեն պարում։

Սրանում է կինը ձեռքերը շրփացնելով, մեջքն իրանը կոտրտելով. երբեմն այնպես կռանում է և շնորհալի՝ դեպի գետինը հասնում, որ կարծես մտադիր է պառկել: Այդպես կռացած ու մեկ կողքի թեքված՝ նա առաջ է գնում և հանկարծ զսպանակի պես վեր նետվում ու նորից մեկ այս, մեկ այն կողմ ծռվելով, ձեռքերն օրորելով, կռները պտտեցնելով՝ ժպիտը դեմքին սահում է, կարծես ոտքը գետնին չի դիպչում:

Նրան քիչ հետո դեմ առ դեմ է գալիս մի ուրիշ կին և ահա սկսում է **Խաչի պարը:**

Երկու հանդիպակացները միևնույն շարժումներով դիմավորում են իրար ու խաչեր կազմում. կանոնավոր խաչեր, կենտրոնը՝ խարույկը. ո՛չ մեկի շարժումը մյուսից չի զանազանվում. ծռվում են միասին, նույն նազանքներն անում, նույն ամանակով մատները շրփացնում և նո՛ւյն ռոպեին խաչաձև գծերի ծայրերը հասած՝ միաժամանակ դառնում, դեպի կենտրոնը սրանում և կենտրոնից դեպի խաչի թևերը սահում...

Այդ բոլորը կատարվում է այնքա՛ն արագ, այնքա՛ն ճշտությամբ, որ սքանչելի մի տեսարան է պատկերանում միաժամանակ դեպի կենտրոնը եկող և ապա լայնության թևի ճյուղերը գնացող զույգից:

Տասնհինգ ռոպե խաչեր ձևացնելուց հետո, երկու կանայք երկարության թևի ծայրերից դեպի կենտրոնն են գալիս, միմյանց գլուխ տալիս և պարը այդպիսով վերջանում է:

Այնուհետև երաժշտությունը պահ մի լռում է: Սկսում է մի խոսակցություն:

Ամեն ոք պատմում է իր տեսածն ու լսածը, դաշտից, գյուղերից բերած նորությունները: Սկսում են սուր խոսքեր, կատակներ, փոքրիկ պատմություններ... Մանուկները ժողոված հեռուն՝ խաղում են. աթոռակալը խրատներ է կարդում: Բոլորը պատկառանքով լսում են ալևորին, այդ փորձված նահապետին, որ գիտե ամենքի ցավերը, ամենքի ուրախությունները:

Հետո նվագողը դարձյալ տիկը ձեռք է առնում, ուռեցնում և ահա կանանց ու տղամարդկանց խումբը միասին սկսում է երգել նախ մեղմ, ապա ուժգին և սարահարթը լցվում է մի անուշ երաժշտությամբ: Մանուկները քիչ-քիչ ընկերանում են, խարույկը բոցեր արձակում, ճարճատում, շողում ու կարմիր գույն է սփռում խմբի վրա...

Ահա այսպես էին կյանք վարում բոշ վրանների մեջ բնակվող թափառական այն հայ բոշաները, որոնց մեջ էր եկել քիչ հանգստանալու Մարգոն, առնելով իր աղջիկն Էրզրումից:

———

Բոշ վրանների բնակիչները Փոքր Ասիայից, Բոյրաթի կողմերից ելած, թափառելով մտել էին Էրզրումի նահանգը և երկու տարուց ի վեր, գարնանից սկսած վրանաբնակ, ձմեռը գյուղերում, կտրել էին ամբողջ երկիրը և այժմ Բասենի դաշտումն էին մտադիր անցկացնել այդ ամառը:

Մարգոյին բոլորը ճանաչում էին և ամենքը հարգում: Մարգոն ի՛ր օջախը, ի՛ր վրանը չուներ: Նա հյուր էր ազգակիցներից մեկի մոտ, բայց ինքն իր աշխատանքով էր ապրում: Ո՛չ մի բոշա կին նրա պես ճարպիկ, շատ հավաքող և մեծ պաշար բերող չէր ամբողջ վրաններում. ոչ ոք նրա պես երկիրներ տեսած, ամեն անկյուն, ամեն ճանապարհ ճանաչող չկար և ոչ ոք սակայն՝ նրա պես մռայլ ու տխուր, մտախոհ չէր ամբողջ ցեղի մեջ:

Բոլորը գիտեին Մարգոյի պատմությունը...

Այնտեղ, դեպի Բոյրաթ տանող ճանապարհի վրա, շատ տարիներ առաջ, երբ Մարգոն դեռ իր ցեղի ամենասիրուն հարսն էր, Կ. Պոլսից եկած մի անցորդ թուրք աստիճանավոր տեսել էր նրան և զենքի ուժով խլել, անպատվել, թողել ու անցել էր: Մարգոյին հիվանդ՝ Բոյրաթ էին իջեցրել. նա մտքումը դրել էր անպատվողից վրեժն առնել: Թողել էր տունուտեղ, ամուսին, որդի, գնացել էր Կ. Պոլիս, աստիճանավորին որոնել և չէր գտել: Եկել էր Երզնկա. նույնպես չէր գտել. հետո վերադարձել էր իր երկիրը և ի՜նչ տեսել: Իր ամուսինը, իր Արթենը, ոչ միայն թողել էր բոշայությունը, այլև թուրքերի հետ միացած՝ ամեն տեսակ չարիքներ էր տեղում ազգակիցների գլխին, մատնում էր, դավաճանում, բոշա հարսներին թուրք պաշտոնյաներին տանում և որն առավելն է, դավադրությամբ ամբաստանել էր ծերունի աթոռակալ Մովսեսին, ինքը թուրքացել, բռնի՝ բոշաների ցեղապետ էր կոչվել ու մի թուրք կին տուն բերելով՝ օջախը պղծել...

Մարգոն այդ բոլորին չէր դիմացել. աշխատել էր ամուսնուն համոզել, տանել իր հետ, հեռացնել այդ ստորություններից: Բայց Արթենը վռնդել էր նրան, կոպտությամբ մերժել:

Եվ այն ժամանակ Մարգոն կատաղի, դաշունահարել էր ամուսնուն, և նրա արյունով սրբել էր օջախի անպատվությունը...

Բայց դեռ իր հոր օջախը պղծված էր մնում. դեռ իրեն բռնաբարողից վրեժ չէր լուծված, մինչև այժմ Մարգոն, լի վրեժխնդրության ծարավով փնտրում է վատին, որոնում նրան երկրի ամեն անկյուններում և քանի չի գտնում, այնքան տխրում է, մռայլվում, մոռացել է նա ամեն ինչ. միտքը միա՛յն և միայն իր վրեժին է հառված...

Եվ լուռ ու խոհուն՝ նստել է Մարգոն ահա կանանց խմբի մեջ գլուխը ծնկին, անցել է իր հին հիշողություններին: Հիշում է, որ ինքն էլ մի ժամանակ պարում էր զվարթությամբ խաչի այդ պարը և ոչ ոք չէր կարող նրա հետ մրցել: Հիշում է, որ տղամարդկանց խելքը գնում էր, երբ նա կարմրած ու բոցափայլ աչքերով՝ իր վայելուչ, երկար ու ճկուն հասակը ոլորտելով, սեթևեթ շարժումներով սահում էր գետնի վրա, նազանքներով աչքերը ոլորում, դյութիչ ժպիտով շուրջը կախարդում և ապա հպարտ այդ բոլորով, գնում էր նստելու կանանց մեջ՝ տղամարդկանց աչքը միշտ իր վրա: Հիշում է, թե ինչպես բոլորը նախանձում էին իր ամուսնուն, որ այդպես քաջ, գեղեցիկ և համեստ կին ուներ...

Իսկ ա՞յժմ. ի՞նչ է նա: Գեղեցկությունից միայն աչքերն են մնացել, որ այլևս չեն բոցավառվում, այլ լի են մռայլ ու տխրություն սփռող խոհերով: Հասակը նույնն է, բայց այլևս ո՛չ գողտրիկ, ո՛չ ճկուն. և դեմքի վրա, կիզացած, այրված կաշին խորշոմել է, կնճիռներ կազմել. այտերը փոս են ընկել, շրթունքները՝ դառն արտահայտություն ստացել և սիրտը, որ մի ժամանակ այնքան զվարթություն, այնքան հրապույր էր սփռում, այժմ ճնշված, դառնությամբ լի և վիրալից...

Եվ երբ սկսում են երգել, Մարգոն հիշում է, որ ինքն էլ մասնակցում էր այդպիսի երգերի, որ ի՛նքն էլ իր քաղցր ձայնով հրապուրում էր բոլորին. բայց վաղո՛ւց, վաղո՛ւց էր, որ մի խազ չէր հանել կոկորդից, մոռացել էր իսկ երգի խոսքերը...

Ու դառնացած՝ սկսում է լսել:

Խմբական երգը կանգ է առնում: Այժմ մի տղամարդ, ձայնը բարձրացնում է և սկսում մի հնամյա երգ.

Թեև մութն իջավ, երկինքը պատեց,

Թեև սառ ելավ, երկիրը պաղեց,

Բայց մթան միջից լոմ աղջիկն ելավ

Ու սառի միջից ջերմություն սփռեց:

Լոմ աղջիկ սիրուն,

Աչքերդ լույս տվեց.

Լոմ աղջիկ սիրուն,

Սիրտդ ջերմ սփռեց...

Դրան իբր պատասխան, լոմ (բոշա) կանանցից մեկը գլուխն է բարձրացնում ու երգում.

Թեև մութն ընկավ, երկինքը պատեց:

Թեև սառ ելավ, երկիրը պաղեց,

Բայց մթան միջից ե՛ս քեզ լույս կըտամ,

Եթե դու լինիս իմ տանը հսկան,

Եվ սառի միջից ես քեզ սիրտ կտամ,

Եթե դու լինիս առյուծի նման:

Լոմ տղա կտրիճ,

Աչքերս քեզ կըտամ,

Լոմ տղա կտրիճ,

Սիրտս քեզ կըտամ...

Այդ ընդդիմախոսական երգը շարունակվում է և ամեն անգամ երգում են տարբեր կանայք: Եղանակը գողտրիկ ու կայտառ, բայց միատեսակ է և նմանում է վիճաբանության: Մանուկները թողնում են ամեն բան ու մոտենում. աթոռակալը ժպիտն երեսին դիտում է վեճը. տղամարդիկ տաքանալով՝ միմյանց են քաջալերում և կանայք միմյանց հորդորում՝ ավելի սուր պատասխաններ շարադրելու:

Եվ հովվական տիկն իր միաձայն խաղովը ձայն է բռնում երգելիս, իսկ ընդմիջումներին՝ մի թեթև նախերգանք հնչեցնում:

Ըստ երևույթին երգը մի հին, վաղածանոթ նվագ էր. բայց վարպետությունը նրանումն էր կայանում, որ երգողը պարտավոր էր նույն հանգերով և նույն եղանակով՝ ինքնուրույն, նո՛ր բան արտադրել: Որքան սրամիտ էին առաջարկները կամ պատասխանները, այնքան գովասանք և հրճվանք էին ստանում:

Ահա շարժվում է մեկը, ձայնը բարձրացնում և հանպատրաստից՝ բանաստեղծում.

Թեև մութն ընկավ,

Երկինքը պատեց,

Թեև սառն ելավ,

Երկիրը պաղեց,

Բայց խիստ խավարում

Համբույրը լոմ աղջկա

Շրթունքիս դիպած՝

Խոշոր լույս կըտա,

Եվ սառած երկիրը

Լոմ աղջկա սիրով,

Անշո՛ւշտ կտաքանա։

Լոմ աղջիկ սիրուն,

Համբույրդ հույս կտա.

Լոմ աղջիկ սիրուն,

Սերդ կյանք կտա...

— Էհե՛, էհե՛, վատ չէ...— ասում է աթոռակալը.— ապա՞, տեսնե՞նք, կանանց կողմից ի՞նչ պատասխան կգա։

Եվ մինչ տիկը նախերգանքն է անում, կանայք իրար հետ փսփսում են, հետո մեկը ժողովում է իրեն և պատասխանում։

Է՛յ մթան միջից

Կանչող իմ լախուզ[1],

Էյ սառի միջից

Աղաչող մանուս[2]

Լոմ աղջիկն երբե՛ք

Քեզ համբույր չի տա,

Լոմ աղջկա սիրտը

Քեզի չի՛ դառնա՛,

Եթե քո ձեռքը

Երկաթ չփշրի,

Եթե քո սրտից

Աշխարհ չհալվի։

---

[1] Բոշա տղամարդ։
[2] Մարդ։

Լում տղա քնած,

Լում աղջիկն երբե՛ք

Ոչխար չի դառնա,

Որ գա ու քեզ հետ՝

Միշտ խոտ արածա...

— Բա՛, բա՛, բա՛...— կանչում է աթոռակալը,— կերա՞ր, Գիհո՛ր, այս էլ քեզ պատասխան. մարսեցի՞ր...

Ու բոշաները բոլորն էլ զվարթ ծիծաղ են արձակում: Բայց հովվական տիկը շարունակում է: Կանայք սկսում են տղամարդկանց ծաղրելով գրգռել. սրանք էլ ամաչած, դրդում են իրենց միջի երիտասարդներին՝ ամոթով չմնալ:

— Տո ի՞նչ եք ձեններդ կտրել, մարդի՛կ,— կանչում է մի ծերունի,— ո՞ւր է լեզուներդ, վա՛յ ես ձեզ ինչ ասեմ...

— Կնկա խոսքի տակը մնա՛լ... ծո՛, չխոսե՞ք...

Վերջապես մեկը հազում է ու երգում.

Ես մթան միջից

Կանչող լում լախուզ,

Ես սառի միջից

Աղաչող մանուս,

Ձեռքս երկաթ փշրի

Քեզ կոշիկ շինի,

Սիրտս աշխարհ դյութի,

Ոտքիդ տակ բերի:

Լում աղջիկ սիրուն,

Ասա՛, ի՞նչ կուզես,

Որ ինձ համբույրիդ

Արժանի տեսնես...

Կանայք իրար են անցնում, այժմ ամենքն են ուզում պատասխանել. ամենքը բորբոքվել են:

Բայց հանկարծ Մարգոն, որ լուռ լսում էր, ոստնում է, բուռն շարժմամբ դեն է հրում կանանց, և ի զարմանս բոլորի, խռպոտ ու խուլ ձայնով երգում.

Է՛յ դու մթան մեջ,

Կուչ եկած լախուզ

Սառույցների մեջ

Չորացած մանուս:

Ելիր, մեյդա՛ն եկ,

Աղջիկս քեզ կտամ,

Աշխարհում մուրամ

Բերեմ քեզ պահեմ,

Եթե դաշույն ձեռքիդ

Օջախս սրբես,

Եթե թշնամուս

Ոտիս տակ բերես...

Ասում է և հրաբորբոք աչքերով ոտքի ելնում:

Բոլորն ապշել են. տիկը լռում է և մի րոպեի խոր, անշշուկ լռության մեջ լսվում է նորից Մարգոյի խրոխտ, դողդոջուն ձայնը, որ այս անգամ առանց երգելու՝ գոչում է.

— Տեսնե՞նք, ո՛վ է այն լոմ կտրիճը, որ աղջկանս ու օջախիս համար ցույը ձեռքն առնի, գա՛ ետևիցս և իր կյանքը զոհի...

———

... Ու ճարճատում է խարույկը, լուռ են բոշաները. բնության անորոշ, տխուր, գիշերային շշուկն է, որ սահելով լեռների կողմից՝ գալիս խառնվում է ջրվեժի մեղմիկ շառաչյունին. լուսնկա տարածությունը մշուշի քողով աղոտացել է շրջակայքում. խարույկի արնագույն կիսալույսի մեջ տեսնվում են արևակեզ, ակոսված, կնճռալից, տխուր դեմքեր...